Արձանագրություն N 2
«ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/081» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«25» Նոյեմբեր 2021թ.
ժ. 10:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գագիկ Սարգսյանը,
Անդամներ՝ Արթուր Շաքարյանը և Մանուկ Գալստյանը.
Քարտուղար՝ Արթուր Բաղալյանը:

1. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին**

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/081» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը	Տվյալները
«Յուքոմ» ՓԲԸ	ՀՎՀՀ՝ 00024873, հասցե՝ ք. Երևան, Դավիթ Անհաղթ 8/4, հեռ.: (095) 555-054
«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ	ՀՎՀՀ՝ 02500052, հասցե՝ ք. Երևան, Ազատության 24/1, հեռ.: (099) 22-34-07

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

2. Էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հայտերի գնահատման նիստի մասին

Գնահատող հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության պլանավորված առավելագույն գինը՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված:

Չափաբաժնի համարը	Գնվելիք ծառայության		Հայտ ներկայացրած մասնակցի		
	անվանումը	պլանավորված առավելագույն գինը /ՀՀ դրամ/	անվանումը	գնային առաջարկը (առանց ԱԱՀ)	գնային առաջարկը (ներառյալ ԱԱՀ)
1	Հանրային հեռախոսային ծառայություններ	22,800,000	«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ	5,000,000	6,000,000
			«Յուքոմ» ՓԲԸ	19,000,000	22,800,000

3. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից չի ներկայացվել հրավերին կից տեխնիկական բնութագրի 24-րդ կետով պահանջվող ծառայությունների մատուցման միացման վճարի, ամսական բաժանորդավճարի, ներառված անվճար րոպեների, դեպի ՀՀ բոլոր ֆիքսված հեռախոսակապի ցանցերի, ինչպես նաև ԱՄՆ-ի և Կանադայի, զանգեր դեպի տեղական բոլոր ֆիքսված ցանցերի, զանգեր դեպի տեղական բոլոր շարժական ցանցերի, զանգեր դեպի Արցախի շարժական ցանցի, զանգեր դեպի Արցախի ֆիքսված ցանցի, դեպի միջազգային ցանցերի և այլ մատուցվող ծառայությունների սակագնային ցանկը:

Ընդունվել է որոշում՝

Կողմ - 3, դեմ՝ – 0

4. Գնահատող հանձնաժողովի որոշման մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Մեկ աշխատանքային օրով կասեցնել ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/081 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը,
2. Առաջարկել «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:
3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի նոյեմբերի 29-ին ժամը 11:00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ. Խորենացի 3 հասցեում:
4. Սույն որոշման հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/081 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բադալյանին.

Ընդունվել է որոշում.

Կողմ՝ 3, դեմ՝ 0

Գնահատող հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Գ. Սարգսյան

գնահատող անդամներ՝ _____ Ա. Շաքարյան

_____ Մ. Գալստյան

քարտուղար՝ _____ Ա. Բադալյան